Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՐԹՈՒՐ
ՄԿՐՏՉԵԱՆ

ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ՀԱԴՐՈՒԹՈՒՄ

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉԵԱՆ

Ի՞ՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ՀԱԴՐՈՒԹՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

«ԴԷՊԻ ԵՐԿԻՐ»
ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԹԻՒ 3

№ 63212

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Արցախեան ազատամարտն ըստ էութեան անբաժան մասն է կազմում Հայ Դատի: Այն պայքարի, որ հայ ժողովուրդը մղում է ի պաշտպանութիւն հայրենի հողի, սեփական գոյութեան պահպանման եւ ազգային արժանապատուութեան:

Այդ ազատամարտի իւրաքանչիւր դրուագը, իւրաքանչիւր սխրանքը, յաղթանակներն ու պարտութիւնները սերտօրէն առնչւում են մեր ժողովրդի եւ առհասարակ Հայաստան աշխարհի ճակատագրի հետ եւ թողնում են իրենց անջնջելի հետքը նրա ապագայի, նրա առաջընթացի ու զարգացման հոլովոյթի վրայ: Ուստի եւ անհրաժեշտ է, որ Արցախեան ազատամարտին վերաբերող ամէն մանրամասնութիւն ամուր դրոշմուի մեր մտապատկերում, որպէսզի ոչ ոք, ոչ մի քաղաքական գործիչ չփորձուի կըրկընել սխալները, թիավարել հոսանքն ի վեր՝ ընդդէմ հայ ժողովրդի գերագոյն շահերի, եւ նրան առաջնորդել դէպի կործանման անդունդը:

Ով չի սերտում, պատմութեան դասը, հակամէտ է դայթելու իր գործունեութեան ընթացքին եւ կամայ-ակամայ դաւաճանելու սեփական ժողովրդին, հայրենիքին ու նրա շահերին: Ուստի պէտք է, որ յետնորդ սերունդների յիշողութեան համար գրուեն, պատմուեն ժամանակակից պատմութեան բոլոր դէպքերը, խօսուեն այն պատճառների մասին, որոնց հետեւանքները կրում ենք այսօր եւ որոնց արձագանգները պիտի զգան ապագայ սերունդները:

Արցախի ազատագրութեան համար մղուած պայքարում, թշնամու կողմից հայաթափման նկրտումներում, նրա հայացման համար առնուող քայլերում եւ այդ հակադիր ձգտումների բարդ ու մանուածապատ փոխյարաբերութիւններում շատ բան կայ ուսանելի: Արցախեան ազատամարտում 1991ի ամառը յատկանշւում է իբրեւ հայաթափման փուլ, երբ ադրբեջանցի թուրքերը կոթնած ռուսական սուինին մէկը միւսի յետեւից հայաթափում էին Հաղրութի շրջանի գիւղերը, տեղահանում հայ ազգաբնակչութեանը եւ նրանք վերաբնակեցնում թուրքերով: Փաստօրէն կրկնւում էին Մեծ եղեռնի դէպքերը, անշուշտ աւելի փոքր մասշտաբներով: Եթէ երկու դէպքում էլ առկայ էին ցեղասպաշտական, պան-

„Mesrop Mashtots University"
Co.LTD
№ 10789
07 11 2018 թ.

թիւրքական ձգտումները, ապա երկրորդի պարագային դրան աւելանում էր Հայաստանի իշխանութիւնների կողմից Արցախեան հարցում կիրառուած սխալ քաղաքականութիւնը:

1991ի ամռանը Հադրութում հայաթափ եղած գիւղերը այժմ ազատագրուած են չնորհիւ հայ ազատամարտիկների աննկուն պայքարի, ռազմական սխրաչատ գործողութիւնների եւ նահատակ զինուորների թափած բոսոր արեան: Զկայ այսօր նաեւ Հադրութի իրադարձութիւնների ականատես, անմիջական մասնակից ու ղեկավար դիրքերում զէնքը ձեռքին կռուած Արթուր Մկրտչեանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի անդրանիկ նախագահը, որի եղերական մահը տեղի ունեցաւ մի քանի օր առաջ: Նրա գրչին պատկանող այս գրքոյկը, որ գրուած է Հադրութի հայաթափման անմիջական ու թարմ տպաւորութեան տակ, մի թանկագին մասունք է, որ հնարաւորութիւն կը տայ բոլորին ճիշտ տեսնելու եւ ճիշտ ըմբռնելու 1991ի ամռանը Հադրութում տեղի ունեցած իրադարձութիւնները, գտնելու պատասխանատուներին եւ ճիշտ կողմնորոշուելու ապագայում որդեգրուելիք քաղաքականութեան մէջ:

Հայկական պահանջատիրութեան, Միացիալ Հայաստանի ստեղծման ուղու վրայ Արցախեան ազատամարտը հանդիսանում է առաջին հանգրուանը: Ուրանալ Արցախեան դատը, փորձել թօթափել այդ անուրը զանազան պատրուակներով կամ հայավնաս լուծումներով, նշանակում է դաւաճանել Հայ Դատին ընդհանրապէս: Նա որ պաշտպան չի կանգնի Արցախեան Դատին չի կարող երբեւէ պահանջատէր հանդիսանալ հայ ժողովրդի իրաւունքների եւ հայապատկան հողերի համար:

Հադրութի հայաթափումը պիտի ահազանգի սերունդներին, թէ ամբողջական հայութեամբ ամբողջական Հայաստանի համար հայապատկան իւրաքանչիւր թիզ հողի պաշտպանութիւնը ինչպէս անցեալում, նոյնպէս եւ ներկայիս ու ապագայում մեր ժողովրդի նուիրական ու անդավաճանելի պարտականութիւնն է:

Խ. Տ.-Գ.

Ի՞ՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ես նպատակ չունեմ քաղաքական վերլուծութիւններ կատարելու եւ չեմ էլ յաւակնում ողջ կատարուածը ներկայացնել ամենայն մանրամասնութեամբ եւ ճըշգըրտութեամբ, որովհետեւ ինքս էլ շատ բանից տեղեակ չեմ, կամ տեղեակ եմ, երկրորդ նոյնիսկ երրորդ անձի միջոցով: Սակայն երկու հիմնական հարցի կարծում եմ անհրաժեշտ է պատասխանել: Սպասելի՞ էին արդեօք այն իրադարձութիւնները, որոնք տեղի ունեցան շրջանում, եւ հնարաւո՞ր էր դրանք կանխել, թէ՝ ոչ: Առաջ անցնելով միանգամից պատասխանեմ, որ ընդհանուր քաղաքական առումով եւ տեսականօրէն սպասւում էին այդ իրադարձութիւնները եւ այն կարելի էր կանխել միայն բարձր քաղաքական մակարդակով: Գործնականում քչերն էին սպասում ու հաւատում իրադարձութիւնների նման ընթացքին եւ փաստօրէն ոչինչ կամ շատ քիչ բան ձեռնարկուեց: Պիտի ասել, որ համընդհանուր խուճապի ու շփոթուածութեան պայմաններում հնարաւոր չէր աւելին անել բընռնագաղթը կանխելու համար: Սակայն բոլորն այսօր միանշանակ այն կարծիքին են, որ վճռական լինելու դէպքում հնարաւոր էր գոնէ գիւղերի բռնագաղթը, թալանը կանխել եւ որոշ տեղերում դա յաջողուեց: Սակայն միւս կողմից էլ վճռական լինելուն խանգարեցին ստոյգ տեղեկութիւնների պակասը եւ կրկին ու կըրկին խուճապն ու շփոթուածութիւնը: Եթէ Ստեփանակերտում չանսալով Հադրութից գնացող ահազանգերին՝ մայիսի 13ին կատարուածը համարեցին ընդամէնը անձնագրային ռեժիմի ստուգում եւ հանգստացրին շրջանի ղեկավարութեանը, իսկ 14ին ու 15ին էլ փաստօրէն էական ոչինչ չձեռնարկուեց, չնայած ակնյայտ էր արդէն դեպորտացիայի ուղղութեամբ կատարուող գործողութիւնները, ապա Հադրութում 15ին եւ 16ին արդէն հոգեբանօրէն շատ-շատերը հաշտուել էին դեպորտացիայի մտքի հետ եւ չէին կասկածում որ մէկ երկու օրից յետոյ ալիքը կը հասնի շրջկենտրոն: Ճիշտն ասած ինձ համար էլ պարզ չէ մինչեւ վերջ թէ ինչը կանգնեցրեց դեպորտացիայի թափ առնող անիւը:

Իսկ այժմ ամէն ինչի մասին հերթականութեամբ: Ապրիլի կէսերին Հադրութում լուրեր տարածուեցին, թէ սպասւում են անձնագրային ռեժիմի մեծ մասշտաբի ստուգումներ ամենայն հաւանականութեամբ ադրբեջանական կողմի մասնակցութեամբ եւ հնարաւոր են ձերբակալութիւններ: Ստուգումները սկսուեցին ապրիլի 25ին եւ երեք օրում անցնելով շրջանի հիւսիսային ենթաշրջանի համարեա բոլոր գիւղերով՝ Ապրիլի 28ին ալիքը հասաւ Հադրութ: Իրականացնողը ներքին զօրքերի ստորաբաժանումներն էին, որոնց ուղեկցում էին քաղաքացիական հագուստով ադրբեջանցիներ: Վերջիններս ներկայանում էին որպէս դատախազութեան աշխատակիցներ: Այդ օրերի աւարը մեծ չէր, մի քանի որսորդական հրացան եւ մի քանի ձերբակալուածներ, որոնց տեղափոխեցին Ֆիզուլի: Ժողովուրդը այս երկու տարում սովորել էր այդ ամէնին եւ կատարուածը ըն-

դունուեց հանգիստ: Միեւնոյն ժամանակ, իհարկէ, շրջանի ղեկավարութեան եւ ձերբակալուածների հարազատների կողմից սկսուեցին միջոցներ ձեռնարկուել ձերբակալուածներին ազատելու համար: Այդ նպատակով դիմում էին առաջին հերթին պարետատանը եւ նաեւ ադրբեջանական կողմին այլ եւ այլ միջնորդների միջոցով: Առաջ անցնելով ասեմ, որ հիմնականում ձերբակալուածները ազատ էին արձակւում որոշակի գումար կորզելուց յետոյ միայն, ընդ որում ոչ միայն նրանցից ում նկատմամբ քրեական գործ էր յարուցւում, այլեւ նրանցից ում առանց որեւէ պատճառի վարչական կալանքի էին ենթարկում:

Ապրիլի 29ին օրը բացուեց տագնապով: Լուսադէմին Տող գիւղում ներքին զօրքերի եւ այս անգամ արդէն ադրբեջանական կողմից ձերբակալուել էին 6 հոգի սովխոզի դիրեկտորի գլխաւորութեամբ: Ձերբակալութիւնները կատարուել էին որոշակի սկզբունքներով, նախապէս կազմուած ցուցակով, որի մէջ գրանցւում էին սովորաբար, ինչպէս ցոյց տուեցին հետագայ դէպքերը եւս, գիւղի ղեկավարները եւ շարժման ակտիւիստները: Տողի որոշ ակտիւիստներ նախապէս հեռացել էին գիւղից եւ նրանց չյաջողուեց ձերբակալել: Նոյն օրը որոշ մարդկանց ձերբակալութեան փորձ կատարուեց Հադրութում, սակայն անյաջող: Ձերբակալուածներին նոյնպէս Ֆիզուլի տեղափոխեցին եւ միայն աստծուն եւ իրենց է յայտնի թէ ինչ ծաղրուծանակի ու չարչարանքների են ենթարկուել նրանք: Այս դէպքերը օգտագործուեցին շրջանի որոշ ղեկավար աշխատողների կողմից աւելի ակտիւօրէն պրոպագանդելու ադրբեջանցիների հետ բանակցութիւնների անհրաժեշտութիւնը, քանի դեռ «բանը բանից չի անցել»: Պէտք է ասել, որ այդ նոյն օրերին յամառօրէն լուրեր էին պտտւում, - որոնց ստուգութեանը դժուար է հաւատալ -, որ Հադրութի հարեւան ադրբեջանական շրջաններում զօրքերի կուտակումներ կան, որոնք գտնւում են անմիջապէս Մութալիբովի կարգադրութեան տակ, եւ որ իբր Գորբաչովը մայիսի 4ից 15ը ժամանակ է տուել Մութալիբովին Ղարաբաղի հարցը իր ուզած ձեւով լուծելու համար: Այս եւ այլ լուրերն աւելի էին ուժեղացնում տագնապը եւ ամէն քիչ թէ շատ նշանակալից իրադարձութիւն շրջանում մեծ խուճապի տեղիք էր տալիս: Այսպէս դեռեւս ապրիլի 25ին ուղղաթիռներից ռմբակոծութեան ենթարկուեցին Հադրութի շրջակայ անտառը եւ այդ անտառով Հադրութ մտնող խճուղին, որի ընթացքում շարքից դուրս եկաւ Հադրութում տեղակայուած սահմանապահ զօրամասի մեքենան, իսկ նրա ուղեւորները հրաշքով փրկուեցին: Այդ նոյն հրաձգութեան ժամանակ վիրաւորուեց ճանապարհի վրայ հսկողութիւն իրագործող ներքին զօրքերի կարգախմբի զինուորներից մէկը:

Այդպէս էլ մնաց չպարզուած, թէ ի՞նչ ուղղաթիռներ էին, որտեղի՞ց, ո՞ւմ հրամանով եւ ինչո՞ւ էին գնդակոծում: Իսկ ենթադրութիւններ ու վարկածներ՝ ինչքան ուզէք: Գումարած նաեւ վախ, որ նման բան կարող է կրկնուել ցանկացած պահի եւ ոչ թէ անտառի, այլ բնակավայրի վրայ: Մայիսի մէկին Ֆիզուլի-Տող խճուղու վրայ անյայտ հանգամանքներում պայթեց շրջանի ադրբեջանցի կոմունիստների բազայի վրայ ստեղծուած Հադրութի շրջկոմի քարտուղար, Տողի ինտերնացիոնալ եւ ապա առանձնացուած ադրբեջանական դպրոցի նախկին տնօրէն Նիյազ Ջհանգիրովի ծառայողական մեքենան, որի ժամանակ

սպանուեցին երեք հոգի: Դա էլ առիթ եղաւ, որ Տողի ադրբեջանցիները յարձակուեն գիւղի կապի բաժանմունքի շէնքի վրայ, որը հիմնականում գիւղի հայ բնակչութեանն է սպա- սարկում եւ ջարդուփշուր անեն այն, իսկ հայ բնակիչները Ֆիզուլուց թուրքերի յարձակման պոտենցիալ վտանգի տակ խուճապի մատնուեն եւ կանանց ու երեխաներին դուրս բերեն գիւղից: Խուճապային տրամադրութիւններ ստեղծեց նաեւ որոշ ուղեկալների վերացումը հայ-ադրբեջանական բնակավայրերի սահմանագծում եւ այլն:

Ահա այս պայմաններում շրջանից մի պատուիրակութիւն գնաց Ստեփանակերտ մարզի ղեկավարների կարծիքն իմանալու հետագայ անելիքների մասին: Հանդիպելով առանձին-առանձին Ս. Բաբայեանի, Ս. Դաւթեանի, Հ. Պողոսեանի հետ եւ միասնական որեւէ կարծիք ու խորհուրդ չլսելով՝ նրանք վերադարձան Հադրութ եւ առաջնորդուելով Հ. Պողոսեանի յայտնած բանակցութիւնների անհրաժեշտութեան մասին կարծիքով, շրջգործկոմում կազմակերպեցին շրջանի ղեկավար աշխատողների խորհրդակցութիւն, որի ընթացքում որոշուեց հիմնարկ ձեռնարկութիւններում անցկացնել ժողովներ եւ բնակչութեան կարծիքը իմանալ բանակցութիւնների հարցի մասին: Սակայն որովհետեւ այդ ամէնը ուղեկցւում էր ազատագրական շարժման եւ նրա ակտիւիստների վարկաբեկման, նրանց հասցէին մեղադրանքներ թափելու կամպանիայով եւ փաստօրէն մարզից անջատ, սեպարատ ձեւով, շարժման ակտիւիստների կողմից որոշ քայլեր ձեռնարկուեցին կանխելու դէպքերի նման անցանկալի ընթացքը: Ժողովները սպասուած արդիւնքը չտուեցին: Կրկին առաջ անցնելով ասեմ, որ Մայիսի 13-16ի դէպքերի ընթացքում, բազմիցս ակտիւիստների հասցէին շրջանի ղեկավարների կողմից հնչեց այն մեղադրանքը, որ բանակցութիւնները նրանց կողմից խանգարելու պատճառով է, որ այսքան օյին եկաւ շրջանի գլխին: Թէ որքանով է հիմնաւոր այս մեղադրանքը թող դատեն ընթերցողները: Ասեմ որ այդ օրերին առանձին հաշտութեան բանակցութիւններ են տեղի ունեցել Առաքիլ գիւղի եւ Ջեբրայիլի շրջանի ներկայացուցիչների միջեւ: Պայմանաւորուածութիւն կար կրկին հանդիպելու, որը սակայն չկայացաւ: Պատճառը, ինչպէս պնդում են շրջանի ղեկավարները, դարձեալ ակտիւիստների բացասական վերաբերմունքն էր այդ հանդիպման նկատմամբ, չնայած Հադրութում շատ շատերը պատկերացում անգամ չունէին այդ ամէնի մասին: Հետաքրքիրն այն է, որ ծանր օրերին շատ շատերը մտահոգուած էին ոչ թէ ծանր վիճակից դուրս գալու հարցով, այլ այդ վիճակի մեղաւորի որոնումով: Եւ պատահական չէ, որ շատ շատերը անիծում էին թէ՛ շարժումը, թէ՛ միացումը, թէ՛ ակտիւիստներին, թէ՛ Հայաստանը, որ այսքան ցաւեր բերեց իրենց: Եւ այս ամէնը արձանագրում եմ որպէս փաստ, առանց որեւէ մեկնաբանութեան, որովհետեւ նման վիճակների մէջ դեռ շատ ենք ընկնելու եւ այն ինչ տեղի է ունեցել Հադրութում, չի բացառւում, որ կրկնուի նաեւ ուրիշ շրջաններում:

Այնուամենայնիւ մի պատուիրակութիւն կազմուած շրջանի որոշ ղեկավար աշխատողներից, վետերաններից եւ ձերբակալուածների հարազատներից մեկնեց Ստեփանակերտ Պոլիանիչկոյի հետ հանդիպման՝ ձերբակալուածների ազատ արձակման հարցով: Այդ հանդիպման գաղափարը յուշել էր ինքը Պոլիա-

1991թ. Մայիսեան բռնագաղթը Հադրութի շրջանում



Վերարտադրութիւն Արթուր Մկրտչեանի կազմած քարտէզի

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ○ Բռնագաղթի չենթարկուած գիւղեր
- ● Բռնագաղթի ենթարկուած եւ թալանուած գիւղեր
- ◐ Մասամբ թալանուած գիւղ, որի բնակիչները կրկին վերադարձել են
- ⊕ Նախկինում աւերակ հայկական գիւղ
- ▲ Վերականգնուող գիւղ
- ⊖ Մինչեւ 1989 թ. խառը բնակչութիւն ունեցած գիւղեր, որոնք հայաթափուել են
- ⊙ ---- Ադրբեջանցիներով բնակեցուած գիւղեր /⊙ լրիւ, ⊙ Տող մասամբ/
- ● Ծամձոր Բռնագաղթից յետոյ ադրբեջանցիներով բնակեցուած գիւղեր
- ------- Ճանապարհներ

Ծանօթութիւն: Հողեր գիւղը Հադրութի շրջանից Ֆիզուլլու շրջանին է անցել 1930 թ.:
Ղուշչիլար գիւղը հայերի կողմից լքուել է 1940 թ., հետագայում բնակեցուել է ադրբեջանցիներով եւ 1991 թ. ստացել գիւղի ստատուս:



Արթուր Մկրտչեանի ձեռքով գծուած քարտէզից հատուած

Նիշկոն եւ ձերբակալուածների հարցը ուղղակի առիթ էր, որովհետեւ ակնյայտ էր, որ հարկ եղած դէպքում նա կարող էր առանց խնդրանքի էլ ազատ արձակել ձերբակալուածներին:

Այսպիսով Մայիսի 13ի դէպքերի նախօրեակին ադրբեջանական կողմը փորձեր էր անում կոնտակտի մէջ մտնել հայկական կողմի հետ, իսկ շրջանում էլ կային մարդիկ, որոնք պատրաստ էին գնալու դրան եւ միայն իրենց ասելով հասարակական կարծիքի ճնշման տակ ստիպուած էին ձեռնպահ մնալ, չնայած համոզուած էին, որ շրջանի փրկութիւնը բանակցութիւնների գնալու մէջ է, որովհետեւ թէ՛ ադրբեջանցիների եւ թէ՛ ռուսների կողմից բազմաթիւ նախազգուշացումներ էին յայտնւում սպասուելիք վատ դէպքերի մասին:

Մայիսի 13ին եւ հետագայ օրերին Առաքելում (Առաքիլ) եւ ենթաշրջանի գիւղերում ներքին զօրքերի եւ ՕՄՕՆի կատարած խուզարկութիւնների ու ձերբակալութիւնների մասին շատ է խօսուել: Այստեղ կարեւորը շրջանի բնակչութեան եւ ղեկավարների վերաբերմունքն է դէպքերի նկատմամբ: Ինչպէս սկզբում նշուել է, Ստեփանակերտ գնացած ահազանգերին պատասխանեցին, որ չպէտք է խուճապի մատնուել, քանի որ ընդամէնը անձնագրային ռեժիմի ստուգում է: Սակայն այդ օրը երեկոյեան արդէն Բանաձոր եւ 8որ գիւղի բնակիչները կանխատեսելով, որ յաջորդ օրը Առաքելում տեղի ունեցածը կը կրկնուի իրենց գիւղերում, կանանց ու երեխաներին տեղափոխեցին Հադրութ: Մայիսի 14ին ստուգումները եւ վայրագութիւնները շարունակւում էին, մարդկանց ստիպում էին ստորագրել դիմումներ մարզի տարածքը կամաւոր թողնելու մասին: Երեկոյեան լուր ստացուեց Ջիլանում երկու տուն վառելու մասին: Սպասւում էր որ յաջորդ օրը ստուգումներ կը լինեն Հադրութում: Ուշ գիշերին շրջկենտրոնում տեղի ունեցաւ միտինգ, որի ընթացքում ժողովրդին կոչ արուեց լինել զգօն, զսպուած եւ տեղիք չտալ պրովոկացիայի: Պէտք է ասել, որ այդ օրերին Գետաշէնի սինդրոմը իր դերը խաղաց Հադրութում՝ փաստօրէն կաշկանդելով եւ զերծ պահելով որեւէ ակտիւ գործողութիւնից: Միեւնոյն ժամանակ պայմանաւորուածութիւն ձեռք բերուեց մի պատուիրակութիւն ուղարկելու մարզային ղեկավարութեան հետ հանդիպելու եւ ստեղծուած վիճակից դուրս գալու քաղաքական քայլեր ձեռնարկելու համար: Հիմնականում շօշափւում էր բանակցութիւնների անհրաժեշտութեան գաղափարը եւ արդէն հնչում էին առաջարկութիւններ անմիջապէս Մութալիբովին դիմելու մասին: Սակայն Մայիսի 15ին Ստեփանակերտ գնալու հարցը ինքնին վերացաւ, ինչ որ կապուած էր վիճակի հետագայ բարդացման հետ: Առաքելցիներին արդէն ուլտիմատում էին ներկայացրել գիւղից հեռանալու մասին: Այնտեղ ձերբակալել էին Հադրութի ութ միլիցիոներներ: Շարունակւում էր առաքելցիների, ցորեցիների, բանաձորցիների հոսքը Հադրութ: Մնացած գիւղերից իրարամերժ տեղեկութիւններ էին գալիս: Ամենուր խուճապ էր ու շփոթ: Այդ օրը տեղի ունեցաւ շրջկենտրոնի հասարակութեան կարճ ժողով, որտեղ որոշուեց հեռագրով դիմել Մութալիբովին: Սակայն հեռագիրը չտրուեց, որովհետեւ շրջանի ղեկավարութիւնը այնուամենայնիւ չէր համարձակւում ինքնուրոյն այդ քայլին գնալ, իսկ մարզկենտրոնը որոշակի ոչինչ չէր անում: Նոյն 15ի օրը Արփագյադուկում սպանուեցին գիւղի 11 ծերունի բնակիչներից 4ը:

16ի առաւօտեան ստուգումներ սկսուեցին Էդիլլուի ենթաշրջանի գիւղերում: Թւում էր թէ խուճապի ու փախուստի ալիքը կ'ընդգրկէր նաեւ այդ գիւղերը, սակայն բարեբախտաբար դա տեղի չունեցաւ:

Սահմանապահ զօրամասի հետ կապ ունեցող շատ հադրութցիներ սկսեցին իրենց ունեցուածքը տեղափոխել այնտեղ եւ գիշերում էին այնտեղի իրենց ծանօթների կամ բարեկամների մօտ: Համընդհանուր խուճապը, անորոշութիւնը, գիւղերից ստոյգ տեղեկութիւնների բացակայութիւնը եւ վտանգը, որ դիմադրութեան փորձը կարող է յանգեցնել արիւնահեղութեան այնպէս, ինչպէս պատահեց Գետաշէնում, կաշկանդել էր թէ՛ ղեկավարութեանը եւ թէ՛ ակտիւիստներին: Միայն յետոյ պարզ դարձաւ, որ փաստօրէն 16-17ին զօրքն ու ՕՄՕՆը ետ էին քաշուել եւ գիւղերում սկսուել էր թալանը, որը կարելի էր կանխել վճռական ու կազմակերպուած լինելու դէպքում: Իսկ 16ին դեռեւս իշխում էր այն տեսակէտը, որ բռնագաղթն անխուսափելի է եւ անհրաժեշտ է միայն ժամանակ շահել նորմալ գաղթելու համար: Գուցէ այսօր ցաւալի է եւ ամօթալի այս մասին գրելը, բայց դա փաստ է, որ տեղի է ունեցել: 16ի երեկոյեան շրջգործկոմից տարածուեց այն լուրը, որ իբր Ստեփանակերտում ղեկավարութեան որոշ ներկայացուցիչներ մտել են Պոլիանիչկոյի մօտ եւ Ադրբեջանի գերիշխանութիւնը ընդունելու պայմանով հասել թալանի եւ բռնութիւնների ու բռնագաղթի դադարեցմանը: Որ իբր Կրիւչկովի անունից հեռագիր է ստացուած Դոլանլարից եւ Առաքելից բռնագաղթուածների շարասիւնը կանգնեցնելու եւ յետ տալու մասին: Ըստ այդ տեղեկութեան բաց էր մնացել միայն ակտիւիստների հարցը եւ պարզ չէր նրանց կը թոյլատրուի հանգիստ լքել մարզի սահմանները, թէ կը ձերբակալուեն: Թէ ո՛վ է Ստեփանակերտից հաղորդել այս ամէնը, ի՛նչն է աղաւաղուած, ի՛նչն էր իրօք ճիշտ, ի՛նչը սխալ, այսօր էլ գոնէ ինձ համար դեռ պարզ չէ: Պարզ է միայն, որ նման ոչ մի բան իրականում չէր եղել: Մինչդեռ այդ օրը աւելի համոզիչ լինելու համար ասում էին, որ «Ժամանակ» ծրագիրը համապատասխան տեղեկութիւն է հաղորդելու եւ շատերը նստած հեռուստացոյցերի առջեւ սպասում էին հաղորդմանը, որը սակայն չեղաւ: Այս ամէնը այսօր անլուրջ է թւում, սակայն դա է եղել իրականութիւնը: Եւ միայն 17ի յաջորդ օրը, երբ գիշերը թաքնուելուց ու անգործութեան մատնուելուց յետոյ դուրս եկանք շրջկենտրոն, պարզ դարձաւ որ ոչ մի բանակցութիւն ու պայմանաւորուածութիւն էլ չի եղել: Հադրութում ձերբակալութեան ու բռնութիւնների նշաններ չկան, իսկ գիւղերում շարունակւում են թալանն ու բռնագաղթը: Առաւօտեան Հադրութ հասաւ Խանձաձորից հետիոտն փախածների շարասիւնը:

17ի երեկոյեան դէմ արդէն ուշացումով ջոկատներ ուղարկուեցին Ծամձոր եւ 8որ, որի շնորհիւ փաստօրէն կանխուեց այդ գիւղերի թալանը: Այդ օրը խանձաձորցիների մի մասը յետ դարձաւ գիւղ եւ կարողացաւ կանխել գիւղի հետագայ թալանը, որն արդէն սկսուել էր: Սակայն Առաքելի, Բանաձորի, Քարագլխի, Միլքուդարայի, Դոլանլարի թալանը շարունակուեց նաեւ յաջորդ օրը 18ին եւ 19ին:

Այդ գիւղերի դիրքերի բաց լինելը, զինուած կերպով գիւղերին մօտենալիս ՕՄՕՆի ծուղակում յայտնուելու վտանգը - իսկ անզէն գնալը նման պայմաններում անիմաստ էր - հնարաւորութիւն չտուեցին որեւէ ռէալ քայլ կատարելու թա-

լանը կանխելու ուղղութեամբ: Բացի այդ կաշկանդիչ էին նաեւ Հադրութից գիւղերում գտնուող խմբերին հաղորդուող այն լուրերը, որոնց համաձայն լուր էր սպասւում, թէ շուտով զինուորական պահակախմբեր էին ուղարկելու, ուղղաթիռներ գալու հաւանականութիւն կայ, հարկաւոր է զգոյշ լինել եւ այլն: Այնինչ առաջին զինուորական ուղեկալները 8որ, Առաքել, Բանաձոր ուղարկուեցին միայն մայիսի 21ին: Քարագլուխ առաջինը տղաները գնացին 20ին, իսկ Միւլքուդարա 23ին, երբ գիւղերը լրիւ թալանուած էին:

17ի երեկոյան անընդհատ ինֆորմացիա էր հաղորդւում Երեւան, Ստեփանակերտ, ընդ որում ճշգրիտ տեղեկութիւնները զուգակցւում էին այնպիսի փաստերով, որոնք հետագայում չհաստատուեցին: Այդ նոյն օրը մի պահ դարձեալ խուճապային տրամադրութիւններ ստեղծուեցին Էդիլլուի ենթաշրջանում, կապուած թուրքերի կողմից սպասուող ներխուժման հետ, սակայն խուճապը ժամանակին մարեց:

Մայիսի 21ին շրջանը որոշ չափով խաղաղուեց: Այդ գիշերը միակ միջադէպը Խծաբերդի կոլտնտեսութեան տաւարի գողութիւնն էր, որի մեղքը ինչպէս նախորդ շատ դէպքերում աւելի շատ հերթապահների վրայ է ընկնում, քան թուրքերի:

Ակնյայտ է, որ այն ինչ տեղի է ունեցել Հադրութի շրջանում նախապէս ծրագրաւորուած էր եւ համաձայնեցրած ամենաբարձր ատեանների հետ: Բաւական է ասել, որ Հադրութում տեղադրուած ներքին զօրքերը այդ օրերին մատը-մատին չխփեցին անգամ այն ժամանակ, երբ ակնյայտ էր, որ աւարտուել է անձնագրային ռեժիմի ստուգման էտապն ու բռնագաղթը եւ միայն թալան է տեղի ունենում: Զօրքերի հրամանատարութիւնը հէնց ինքն է խոստովանել, որ իրենց կարգադրուած է ոչ մի բանի չմիջամտել: Նոյնիսկ Մայիսի 15ին, երբ պարետ Ժուկովը ուղղաթիռով Ստեփանակերտ ժամանեց Առաքել եւ իր աչքերով տեսաւ, թէ այնտեղ ի՛նչ է կատարւում, վիճակը ոչնչով չփոխուեց: Գետաշէնի դէպքերից, Մութալիբովի Ապրիլի 27ի յայտարարութիւնից եւ Մայիսի 13ի մամուլի ասուլիսից յետոյ էր, որ Ղարաբաղին հերթական ծանր հարուած էր սպասւում: Եւ այդ հարուածը կարելի էր կանխել միայն ու միայն ժամանակին քաղաքական քայլեր ձեռնարկելով: Բաւականին փաստեր կային ենթադրելու, որ հարուածի սուր ծայրը առաջին հերթին դէպի Հադրութի շրջանն է ուղղուելու եւ պատահական չէ, որ այստեղ աւելի մեծ ակտիւութեամբ էր աշխատանք տարւում բանակցութիւնների գնալու ուղղութեամբ, չնայած այնքան էլ պարզ չէր, թէ բանակցութիւններով հնարաւոր կը լինէ՛ր արդեօք կանխել հասունացող դէպքերը: Պարզ է միայն, որ շրջանի սեպարատ բանակցութիւնները ոչինչ չէին տալու, եւ եթէ պէտք էր գնալ բանակցութիւնների, ապա միայն ու միայն մարզային մակարդակով եւ միութենական կողմի բարեացկամութեամբ ու միջնորդութեամբ: Լոկ ցանկութիւնը դեռ քիչ էր բանակցութիւնների նստելու եւ ինչ որ հարցեր լուծելու համար: Այս դէպքում էլ դժուար է ասել, թէ ի՛նչն է խանգարել բանակցութիւնների գնալուն, ցանկութեան պակասը, թէ մի այլ բան: Արտայատուեց նաեւ մի տեսակէտ, ըստ որի պէտք է դիմակայել այս հարուածն եւս եւ յետոյ տեսնել, թէ ի՛նչ պիտի անել: Փաստօրէն այդպէս էլ եղաւ: Հիմա փորձում ենք վերացնել հարուածի հետեւանքները, չնայած պարզ է, որ լրիւ կերպով անհնար էր դա անել: Այսօր մենք ուզենք թէ չուզենք պէտք է հաշտուենք Բինեաթլու, Ջիլան, Արփագեադուկ գիւղերի կորստի հետ: Դա արդէն կատարուած փաստ է: Այստեղ հարցը գիւղերի մէջ չէ, որոնց բնակչութիւնը փոքրաքանակ էր եւ ծերունիներով բնակեցուած, որոնք ամենաբարեբաղդ պայմաններում էլ երկար չէին գոյատեւի, այլ նրանում, որ մենք տարածք ենք կորցնում: Եւ յետոյ դեռ չէր վերացել նոր հարուածների վտանգը: Դիմակայելով ամէն մի հարուածի նոյն մտայնութեամբ եւ նոր կորուստների գնով, մի գեղեցիկ օր պիտի տեսնէինք, որ այլեւս կորցնելու ոչինչ չունենք: Ինչ վերաբերւում է ի վերուստ ծրագրուածի կոնկրետ իրագործմանը, ապա պէտք է խոստովանել որ դրա յաջողութեանը նպաստեցին մեծ չափով խուճապը եւ անկազմակերպուածութիւնը: Իսկ վերջինս էլ պայմանաւորուած էր բնակավայրերի եւ շրջկենտրոնի միջեւ նորմալ կապի բացակայութեամբ, բազմաթիւ ապակողմնորոշիչ եւ ուղղակի սուտ լուրերի տարածմամբ: Փաստօրէն նոյնիսկ մի գիւղում չգիտէին, թէ հարեւան գիւղում ինչ է տեղի ունենում: Բացասական դեր խաղաց նաեւ այն մտայնութիւնը, ըստ որի կասկածի տակ էր առնւում շարժման արդարացիութիւնը, այն միայն մի խումբ մարդկանց վերագրելը, այդ մարդկանց հասցէին մեղադրանքներ ու լուտանքներ թափելը թէ բնակչութեան որոշ խաւերի եւ թէ յատկապէս ղեկավար աշխատողների կողմից, ինչ որ փաստօրէն կաշկանդեց ակտիւիստներին դիմելու ակտիւ գործողութիւնների:

Ես միտումնաւոր կերպով անուններ չյիշատակեցի, ոչ թէ խուսափելով նրանից, որ կարող եմ մէկին վիրաւորել, իսկ մէկ ուրիշին սուբեկտիւօրէն մեղադրել, այլ այն պատճառով, որ կարծում եմ դրա անհրաժեշտութիւնը չկայ: Կատարուածի համար բոլորս հաւասարապէս պատասխանատու ենք եւ կարծում եմ, որ մենք ոչ թէ պէտք է հաշիւներ մաքրենք եւ միմեանց մեղադրանքներ ներկայացնենք, այլ կատարուածից դասեր առնենք եւ նոր սխալներ թոյլ չտանք, որոնցից տուժողը վերջին հաշուով մեր ժողովուրդն է:

Այս ամէնը ես շարադրել եմ Մայիսի 31ին, որից յետոյ դէպքերը կրկին այլ ընթացք ստացան:

Ինչպէս արդէն նշել եմ 17ից մենք հսկողութեան տակ վերցրեցինք 8որ եւ Ծամձոր գիւղերը: Առաջինի թալանը ամբողջութեամբ կանխել հնարաւոր չեղաւ, իսկ երկրորդը կարողացանք ապահով պահել: 21ին, զինուորական ուղեկալները տեղադրելուց յետոյ, սկսեցին, թէկուզ եւ դժուարութեամբ, իրենց գիւղերը վերադառնալ բանաձորցիները եւ առաքելցիները: Խանաձորցիները իրենք իրենց ուժերով եւ Հին Թաղերի ու Սպիտակաշէնի տղաների օգնութեամբ կանխեցին գիւղի հետագայ թալանը եւ համարեա լրիւ վերադարձան: 26-27ին յետ վերադարձաւ Հադրութում գտնուող քարագլխեցիների մի մասը: 28ին առաջին ջոկատը մշտական տեղադրուեց Մուլքուդարայում: Այս գիւղի հարցում դժուարն այն էր, որ ամբողջ գիւղը քշուել էր Գորիս եւ Հադրութում գիւղից նախկինում վերաբնակուածներն էլ ընդամէնը մի քանի հոգի էին: 31ին ինքս անձամբ մի ուրիշ ջոկատի հետ գնացի փոխելու տղաներին: Այն ինչ տեսայ գիւղում (մինչ այդ ես Ծամձորում էի լինում եւ թալանուած որեւէ գիւղ դեռ չէի գնացել) միայն մի նա-

խաղասութեամբ կարելի էր բնորոշել. «Այստեղով թուրք է անցել»: Այնուամենայնիւ մենք մտածում էինք, որ ամէն ինչ կորած չէ եւ ոգեւորութեամբ աշխատում էինք. բոստաններն էինք ջրում, լոբու սարիները տնկում, էլեկտրական գծերը նորոգում, որպէսզի տներում լոյսերը վառ լինեն եւ տպաւորութիւն ստեղծուի, որ գիւղը կենդանի է: Գիւղում մնացած երեք շները մի քանի օր կանոնաւոր սնուելուց յետոյ սկսեցին հաչել, իսկ միակ էշն էլ սկսեց զռռալ: Թւում էր, թէ ամէն ինչ դէպի լաւն է գնում: Բայց աւա՜ղ....

Յունիսի 3ին մենք զգուշութեամբ Նորատակով բարձրացանք գիւղի թիկունքի բարձունքը այնտեղից հսկելու գիւղն ու շրջակայքը: Եւ այն ինչ տեսանք Քարագըլխում միայն հաստատեց մեր ակամայ զգուշութեան իրաւացիութիւնը: Քարագըլխի տակ գտնուող թուրքական Մազրա գիւղում ուղղաթիռ էր իջած, որը մինչեւ վայրէջքը հասցրել էր մի անգամ գնդակոծել գիւղը: Յետոյ մենք իմացանք, որ վիրաւորուել էր մի վաթսունն անց «բայեւիկ», որ գիւղում գտնուող ծերերին թուրքերը բաց էին թողել, իսկ վեց երիտասարդներից չորսին էր միայն յաջողուել փախչել, մնացած երկսին բռնել էին: Ուրեմն Քարագլուխը լցուած էր ՕՄՕ-Նականներով ու մեքենաներով: Զգում էինք,որ ինչ որ բան է տեղի ունենում գիւղում, բայց դժուարանում էինք հաւատալ վատթարագոյնին: Այդ ընթացքում մի ռազմական ուղղաթիռ իջաւ: Յետոյ Ծամձոր գալով իմացանք, որ այդ ուղղաթիռով ժամանած շրջանի ղեկավարութեան եւ պարետատան ներկայացուցչին ցոյց են տուել Ադրբեջանի Գերագոյն խորհրդի որոշումը Քարագլուխը եւ Դոլանլարը թուրքերով բնակեցնելու մասին: Իմացանք նաեւ, որ նախորդ օրը Դոլանլարում ՕՄՕՆը դարան էր սարքել եւ տղաները հրաշքով էին դուրս պրծել, երբ գիւղ այցելութեան էին գնացել, որ Հին Թաղերի հօտն էին քշել երեք հոգու հետ միասին, որոնցից մէկին սպանել էին եւ մէկին բաց թողել, երրորդի տեղն անյայտ էր: Իսկ մենք առաւօտեան տաւարի ետեւից ման եկող չորս թուրքի, որոնք հասել էին Միւլքուդարայի տակ, թողեցինք հանգիստ յետ դառնան, զգուշանալով հետագայ անցանկալի երեւոյթներից, այնինչ անցանկալին արդէն տեղի էր ունենում առանց դրա էլ: Իմացանք, որ Խծաբերդ, Հին Թաղեր եւ Խանձաձոր գիւղերի բնակիչներին այլեւս պահել հնարաւոր չէ, որովհետեւ Քարագլխի գրաւումով նրանց հետ միակ կապը՝ նոր կառուցուած ճանապարհը, կտրւում է, որ Առաքելից ու Բանաձորից ուղեկալները հանել են եւ մարդիկ կրկին Հադրութ են վերադարձել: Երեկոյեան դէմ ուղղաթիռը հետախուզական թռիչք կատարեց Ծամձորի վրայ: Մտածում էինք, որ յաջորդ օրը երեւի Ծամձորի հերթն է եւ գուցէ այստեղ մի վերջին մարտ տանք ու հեռանանք, ինչպէս ասում են, դուռը շրխկացնելով: Բայց ցաւն այն է, որ նշուածս բոլոր գիւղերի դիրքը մեր սակաւ ուժերով կռուելու համար շատ անյարմար է: Չկայ անտառ իսկ ուղղաթիռի առկայութեան պայմաններում մերկ լանջերի վրայ կռուելը անխուսափելի մահուան է հաւասար: Երեկոյեան մենք յանձնեցինք հերթափոխը եւ վերադարձանք Հադրութ: Այսօր՝ Յունիսի 4ն է: Մայիսի 21ից, երբ առաջին հարուածի եւ թալանի ալիքը տեղի տուեց (Ասենք թալանելու բան էլ չէր մնացել), արդէն անցել է երկու շաբաթ: Փաստօրէն ոչինչ չձեռնարկուեց հարցի քաղաքական լուծման ուղղութեամբ, կամ գուցէ ձեռնարկուել է, բայց անարդիւնք, չգիտեմ: Այժմ վրայ է հասել

երկրորդ էտապը, գրաւուած հողերի իւրացումը, եւ չեմ պատկերացնում, թէ դա ինչպէս կը կանխուի սակաւակարող եւ սակաւաուժ մեր շրջանի կողմից: Անշուշտ կը լինեն կռուելու պատրաստ 10 կամ 100 հոգի, բայց դա կը լինի ընդամէնը սփոփանք որպէսզի հետագայում ասենք, որ պատւով մեռանք: Գուցէ ես մռայլ եմ ներկայացնում ամէն ինչ, բայց չէ, երեւի ուղղակի Հադրութից դուրս չեն պատկերացնում այստեղի վիճակը:

4.06.1991 Հադրութ

Ս.Գ.

Համարեա երեք ամիս անց կրկին անդրադառնալով շարադրուածին կարող եմ աւելեցնել, որ Յունիսի 5ին թողնուել է Խանաձոր գիւղը, Յունիսի 6ին Ծամձորը: Ծամձորից յետոյ տղաները մօտ մէկ ամիս հերթապահում էին Սարենշէն գիւղում, թոյլ չտալով թուրքերին Ծամձորից բարձրանալ վերեւ: Սակայն Յուլիսի 4ին շրջանի պարետ Վ.Ի. Կրաւչենկոյի առաջնորդութեամբ ՕՄՕՆը տիրացել էր նաեւ Սարենշէնին: Ճիշտ է մի երկու օր յետոյ Սարենշէնում զինուորական կարգախումբ էր տեղադրուել, սակայն գիւղից վերեւ բարձունքում, նորակառոյց հեռուստակայանում, ՕՄՕՆականները շարունակում են պահել իրենց պահակակէտը, որի պատճառով էլ գիւղի բնակիչները վախենում են յետ վերադառնալ: Ինչ վերաբերում է Հին Թաղերին եւ Խծաբերդին ապա այդ գիւղերի բնակիչները սկզբում փախել էին Տումի, յետոյ զինուորական կարգախումբը տեղադրելուց յետոյ վերադարձել են գիւղերը, սակայն առ այսօր շրջկենտրոնի հետ տրանսպորտային եւ հեռախօսային կապ չկայ: Փաստօրէն բռնագաղթուած եւ թալանուած գիւղերից միայն 8որի բնակիչներն են ետ վերադարձել եւ շարունակում են ապրել իրենց գիւղում շնորհիւ զինուորականների ներկայութեան:

Յունիսի կէսերից սկսած Բանաձոր, Առաքել, Ծամձոր, Դոլանլար գիւղերը բնակեցուել են ադրբեջանցիներով: Այդ նոյն ժամանակ կրկին Հադրութում յայտնուած դեռեւս մէկ տարի առաջ ստեղծուած կազմբիւրոյի նախագահ Զուբկովը բազմեց կուսշրջկոմի շէնքում եւ մի պահ եղաւ, որ փաստօրէն շրջանի ղեկավար աշխատողները հաշուի էին նստում նրա հետ: Պարետ Կրաւչենկոն սկսեց «աշխատանք տանել» շարժման ակտիւիստների հետ եւ ակնյայտ էր նրանց ամէն պահի ձերբակալելու հնարաւորութեան փաստը: Շրջանում ստեղծուեց ծանր իրավիճակ եւ բարոյա-հոգեբանական մթնոլորտ: Հադրութ եկած փախստականների մի մասը տարբեր ճանապարհներով, հիմնականում զինուորական ուղղաթիռներով տեղափոխուեց շրջանից: Հադրութի բնակիչներից ոմանք նոյնպէս սկսեցին լրջօրէն մտածել եւ համապատասխան քայլեր ձեռնարկել վերաբնակուելու ուղղութեամբ: Եւ միայն Յուլիսի կէսերին վիճակն սկսեց որոշ չափով կայունանալ: Մարդիկ սկսեցին վերագնահատել կատարուածը եւ խուճապային տրամադրութիւններն ու հիասթափութեան զգացումը աստիճանաբար տեղի տուեց:

30.08.1991թ.

ՑՈՒՑԱԿ

Հադրութի շրջանում

թուրքերի յարձակումների հետեւանքով զոհուածների

1. Ցիմբալիկ Իգոր Միխայլովիչ, լեյտենանտ, զոհուել է Հախուլլու գիւղում պարեկութեան ժամանակ, 10. 01. 90թ.
2. Յարութիւնեան Էդիկ Առաքելի ծն. 1946, գ. Հակակու, աւտովարորդ, անհետացել է Դիրմանաբանդ տեղամասում, 23. 06. 90թ.
3. Համբարձումեան Եղիշէ Տիգրանի, ծն. 1927, գ. Մեծ Թաղլար, թոշակառու, չի վերադարձել անտառից, 3.11.90, դիակը գտնուել է 16.12.90
4. Չաքմազեան Համբարձում Սիմոնի, ծն. 1935թ., գ. Մեծ Թաղլար, բանուոր, զոհուել է սովխոզի բազայում պահակութեան ժամանակ, 1.12.90
5. Յարութիւնեան Նիկոլայ Իւանի, ծն. 1929, գ. Մեծ Թաղլար, բանուոր, զոհուել է սովխոզի բազայում պահակութեան ժամանակ, 1.12.90թ.
6. Յովակիմեան Ռաֆիկ Լալազարի, ծն. 1945թ. գ. Ծամձոր, նախագահ, զոհուել է Ֆերմայում հերթապահութեան ժաանակ, 3.12.90թ.
7. Տօնեան Աշոտ Առուշանի, ծն. 1926թ., գ. Բանազուր, բանուոր, զոհուել է գինու գործարանում պահակութեան ժամանակ, 4.04.90թ.
8. Մեսրոպեան Սուրէն Վլադիմիրի, ծն. 1926թ., գ. Դրախտիկ, բանուոր, զոհուել է սովխոզի հանդերում պահակութեան ժամանակ, 17.04.90թ.
9. Կարապետեան Էմմա Սարգսի, ծն. 1931թ., գ. Արփագեադուկ, թոշակառու, զոհուել է գիւղը թալանելու ժամանակ, 15.05.91թ.
10. Կարապետեան Սուրէն Յակոբի, ծն. 1929թ., գ. Արփագեադուկ, թոշակառու, զոհուել է գիւղը թալանելու ժամանակ, 15.05.91թ.
11. Յակոբեան Հայասէր Սամուէլի, ծն. 1934թ., գ. Արփագեադուկ, կոլտընտեսական, զոհուել է գիւղը թալանելու ժամանակ, 15.05.91թ.
12. Մանասեան Հայկանուշ Հայրապետի, ծն. 1936թ., գ. Արփագեադուկ, կոլտնտեսական, զոհուել է գիւղը թալանելու ժամանակ, 15.05.91թ.
13. Ստորոժիցկի Իւան Ալեքսանդրովիչ, ծն. 1952թ., պրապորշչիկ, զոհուել է Արփագեադուկ գիւղը թալանչիներից պաշտպանելիս
14. Խուդադեան Միշա Գրիգորի, ծն. 1936թ., գ. Հին Թաղլար, կոլտնտեսական, գերեվարուել է նախիրը պահելու ժամանակ 03.06.91
15. Շահէն, ծն. 1947թ. ք. Աբովեան, գ. Զարդաշէն, զոհուել է Խանաձորը թուրքերի կողմից վերագրաւելու ժամանակ, 12.08.91թ.
16. Աւագեան Հրանտ Աւետիսի, ծն. 1927թ., գ. Տումի, զոոտեխնիկ, զոհուել է Տողի միջով մեքենայով անցնելիս
17. Գրիգորեան Էդիկ Մադաթի, ծն. 1940թ., գ. Տումի, աւտովարորդ, զոհուել է Տողում աւտոբուսի գնդակոծման ժամանակ, 7.09.91թ.
18 Բաբայեան Սերժիկ Սեդրակի, ծն. 1947թ., գ. Թաղոտ, բանուոր, զոհուել է ՏոՀում աւտոբուսի գնդակոծման ժամանակ, 7.09.91թ.
19. Գասպարեան Լիրա Համբարձումի, ծն. 1958թ., ք. Ստեփանակերտ (Տումի), զոհուել է Տողում աւտոբուսի գնդակոծման ժամանակ, 7.09.91թ.
20. Գասպարեան Եաշա Շահէնի, ծն. 1935թ., գ. Աղբուլաղ, բանուոր, զոհուել է գիւղի նախիրը պահելու ժամանակ, 9.09.91թ.
21. Գասպարեան Իւրա Եաշայի, ծն. 1958թ., գ. Աղբուլաղ, բանուոր, զոհուել է գիւղի նախիրը պահելու ժամանակ, 9.09.91թ.
22. Շադեան Ալեքսանդր Ալեոշայի, ծն. 1965թ., գ. Հին Թաղլար, մոնտեոր, զոհուել է գիւղի մերձակայքում հերթապահութեան ժամանակ, 12.09.91թ.

Արթուր Մկրտչյան

Ի՞նչ է տեղի ունեցել Հադրութում

Ստորագրված է տպագրության 05.05.92թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Տպագրության եղանակը՝ օֆսեթ:
Տպագրական 1 մամուլ = 0,93 պայմանական մամուլ:
Պատվեր՝ 131: Տպաքանակ՝ 10000 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

«Միքայէլ Վարանդեան» հ/պ փոքր ձեռնարկություն,
Երեւան, Շոպրոնի փողոց, թիվ 21